ԴՎԻՆԻ ՍԱՍԱՆՅԱՆ ԵՐԿՈՒ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԺԱՄԿՈՉՅԱՆ Ա. Ս.

1961-1962 թթ. Դվինի միջնաբերդի գագաթի արևելյան հատվածում բացվել էր 29x12.5 մ չափերի սպիտակ ավազաքարերի հիմքով ուղղանկյուն եռանավ մի սրահ՝ երկայնական երկու կողմերում չորսական սյուների մնացորդներով: Շինության կառուցողական առանձնահատկություններով հանդերձ՝ քաղաքի հիմնադրման ժամանակներին պատկանելության հարցը (IV դ.) մասնագետների շրջանում ամենևին կասկած չի հարուցել: Վիճահարույց էր կառույցի գործառական նշանակությունը՝ եկեղեցի՞, թե՞ պալատ: Պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի կարծիքով սրահը Արշակունիների պալատի ավերակներն են[1]: Մինչդեռ Արամ Քալանթարյանը և Կորյուն Ղաֆադարյանը 1983-1985 թթ. կառույցը կրկին հետազոտելուց հետո այն գիտական շրջանառության են ներկայացրել իբրև հայկական քրիստոնեական առաջին եկեղեցիներից մեկը[2]: Հետազոտողների ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ շինությունը VI դ. վերջերին վերակառուցվել է՝ հիմք ընդունելով երկու հատակների մակարդակների տարբերությունը (20 սմ): Այս տարածքում VI դ. մշակութային հորիզոնում խիստ ավերված հում աղյուսով շարված սենյակում հայտնաբերվել է Դվինի՝ Սասանյան ժամանակաշրջանին (V-VII դդ.) պատկանող կնքադրոշմների մի համախումբ, որն աղբյուրագիտական զորեղ խթաններից է ժամանակաշրջանի գործող վարչական, քաղաքական կառավարման, առևտրական և պաշտամունքային խնդիրների հնագույն շերտերն ուսումնասիրելիս:

Վերոհիշյալ տեսակետներից ընդունելի է համարվում երկրորդը, քանի որ ներկայումս հիմքեր կան կարծելու, որ եկեղեցու հարևանությամբ դիվանի կենտրոնացումը պատահականություն չէր և, ըստ երևույթին, բխում էր սասանյան օրենսդրական և կանոնական հայեցակետից, այլապես անհասկանալի է սասանյան Թախտ-ի Սուլեյմանի դիվանի առկայությունը գլխավոր տաճարի անմիջական կից կառուցված սենյակում[3]: Կնքադրոշմները կավե փոքրիկ կառույցի զանգվածներ են, որոնք խոնավ վիճակում ամրացվել են առևտրական հակերին կամ մագաղաթներին, կնքվել համապատասխան կնիքով և չորանալուց հետո միայն ձեռք բերել փաստաթղթի արժեք: Ապացուցված է, որ կնքադրոշմների առկայությունը

---

[1] **Ղաֆադարյան Կ.,** Դվինում պեղված ճարտարապետական երկու հուշարձան [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1979, N 4, էջ 119-126], **նույնի՝** Դվին քաղաքը և նրա պեղումները II, Ե., 1982, էջ 89-96:

[2] **Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ.**, Եռանավ բազիլիկ եկեղեցի Դվինի միջնաբերդում (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1996, N 3, էջ 66-71):

[3] **Huff D.,** *Technological Observations on Clay Bullae from Takht – I Suleiman ("Mesopotamia", 1987, XII, fig. A., p. 368).*

հուշարձաններում կապված էր առևտրական գործարքների, իրավական փաստաթղթերի՝ հրովարտակների, հրամանագրերի վավերացման հետ[4]:

Դվինից հայտնաբերված կնքադրոշմներն օժտված են նեղ, տափակ անցքերով, որոնցով անցել է թելը կամ ժապավենը: Վերջինս, շուրջբոլորելով առարկան, ամրացվել է որոշակի տեղում՝ մասնավորապես մագաղաթի դեպքում ձեռք բերելով փաթեթի ձև:

Ստորև մենք անդրադառնում ենք փաստաթղթեր վավերացնող կնքադրոշմների որոշ առանձնահատկությունների քննությանը:

Միջնադարում պետական կարևորություն ներկայացնող մագաղաթները ձևավորվել են ոսկե տառերով: Կաթողիկոս Եզրի և Բյուզանդիայի կայսր Հերակլի միջև կնքված պայմանագրի առիթով Ստ. Օրբելյանը գրում է. «*Եւ թագաւորն ոսկեգիր մագաղաթաւ պարգեւ*»[5]: Այսպիսով, առարկայի իսկությունը հաստատող կավե փոքրիկ կերտվածքը՝ հակիրճ արձանագրությամբ և որոշակի բովանդակություն ամփոփող հարդարանքով, իմաստավորում էր ժամանակի պետական ու գեղագիտական միտքը:

Ակնհայտ է, որ Դվինը սասանյան ընդարձակ տիրապետության սահմանային տարածքն էր, Կովկասի երկրները կառավարող մարզպանի նստոցը և, բնականաբար, նրա “Sahrmar divan Sahhama[r] yasxarhagir” (Շահրմար դիվան յաշխարհագիր)[6] անունով դիվանը, որը կադաստրային արժեքների, կառավարման տարբեր բնագավառների, հրովարտակների, հրամանագրերի ու հրահանգների պահուստով կենտրոնացվել էր պետական նշանակություն ներկայացնող կառույցին կից:

Ցավոք, մեզ հասած հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները վերաբերում են միայն կաթողիկոսական դիվանին: Ուխտանեսը Սմբատ Բագրատունու մասնակցությանը Դվինի եկեղեցական ժողովի առիթով գրում է. «*Եւ զիւր ձեռնարկն տայ նոցա նմանապէս ուղիղ և ճշմարիտ խոստովանութեամբ և մեծ ըզգուշութեամբ կնքեալ և պահեալ ի տուն Տեառն*»[7]: Իսկ «Գիրք թղթոցում» տարբեր աղանդների դեմ հայոց եկեղեցու մղած պայքարին նվիրված հոդվածներից մեկն արձանագրում է. «*Եւ կնքեցաք զձեռնարկս այս և եդաք ի սուրբ եկեղեցւոջս Դուինայ*»[8]:

Տարիներ շարունակ իրականացվող պեղումներով Դվինի կաթողիկոսական դիվանի հետքերը գտնելու ակնկալիքներն ապարդյուն էին: Անշուշտ, պատճառը պիտի փնտրել 893 թ. երկրաշարժից հետո կաթողիկոսի հեռանալու պարագայում, որ, բնականաբար, ենթադրում էր կաթողիկոսական դիվանը տեղափոխելը:

Դվինի կնքադրոշմների հավաքածուն հիմնավորապես քննության է արժանացել Ա. Քալանթարյանի շահեկան ուսումնասիրության էջերում[9]: Հավաքածուի տասներկու՝ մեկական կնիքով դրոշմազարդված դրոշմակնիքներից մեր ուսումնասիրության թեման պաշտոնական երկու դրոշմա-

---

[4] **Калантарян А.,** *Раннесасанидские буллы Двина, Е., 1982, с. 54-55.*

[5] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 118:

[6] **Khurshudian E.**, *Die Parthischen und Sasanidischen Verwaltungsinstitutionen, Yerewan, 1998.*

[7] Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 54-59:

[8] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 149:

[9] **Калантарян А.,** նշվ. աշխ.:

կնիքներն են, որոնք պատմական իրողությունները մեկնաբանելու փաստագրական արժեքավոր նյութեր են և հիմք են տալիս որոշակի հետևություններ անելու: Սասանյան իրականության մեջ պաշտոնական կնիքները շրջանառություն են ունեցել Կավատ Բ-ի (498-531 թթ.) օրոք՝ իրավունք վերապահելով մոգպետներին, ֆինանսական պաշտոնյաներին, համարկարներին՝ օգտվելու պաշտոնական կնիքների ընձեռած արտոնություններից: Խոսրով Ա Նուշիրվանի օրոք (531-579 թթ.) այդ իրավունքներն ամրագրվեցին իր իսկ հովանավորությամբ ձևավորված դատաստանագրքում՝ մասնավորապես օրինականությամբ օժտելով պաշտոնյաներին. «*Իրենց պաշտոնական կնիքով այլ ոչ անհատական մոգպետը և դատավորը պիտի կնքեն դատական փաստաթղթերը և ուղարկեն այլ շահր կամ թաուկ*»[10]:

Դատաստանագրքում կան պաշտոնական կնիքների վերաբերյալ այլ հիշատակություններ, որոնք փաստում են պետական կարևոր վավերագրերի հաստատման պարագաներում այդ իրավունքը կրողի իշխող դերը[11]: Ուսումնասիրվող կնքադրոշմներից մեկը (ՀՊԹ 1981/78)1.9x1.9 չափերի է (նկ. 1): Կիսալուսինների բաղադրիչների միահյուսումով դրոշմազարդված հորինվածքը, որը միջին պարսկերենում nišan (նշան) է կոչվել, հաճախ մեկնաբանվել է իբրև Գանձակի Ատուր Գուշնասպ կրակի տաճարի գրաֆիկ արտացոլումը[12]: Այդ տեսակետը վիճարկող գիտնականների մեկ այլ խումբ նշանն ըմբռնում է իբրև բարձրաստիճան պաշտոնյաների մոնոգրամաներ[13]: Հակված ենք ընդունելու առաջին տեսակետը, մանավանդ որ ուսումնասիրվող կնքադրոշմի վրա Whrmz(dy) Gwšnspy (Որմիզդ Գուշնասպ) բանաձևին ուղեկցում է նշանի հորինվածքը՝ իբրև սրբության խորհրդանիշ: Սա, ըստ երևույթին, ինչպես Ա. Բորիսովն է նշում, պիտի ընկալել իբրև կրկնակի սրբությունների բովանդակությամբ ձևավորված մի կնքադրոշմ, որը, անկասկած, պատկանել է մեծ իրավունքների տնօրինող մոգի[14]: Նմանատիպ կնքադրոշմներ պեղումներից հազվադեպ են: Բացի Դվինից, հայտնի են Ակ-Դեբեի[15], Թախտ-ի Սուլեյմանի և Մինգեչաուրի[16] օրինակները:

Ակ-Դեբեի (Թուրքմենիա) և Թախտ-ի Սուլեյմանի գտածոները VI- VII դդ. թվագրվող մշակութային շերտերից են, իսկ Մինգեչաուրի օրինա-

---

[10] **Периханян А.**, *Сасанидский судебник, Е., 1973, с. 288, 346.*

[11] Նույն տեղում, էջ 285, 289, 315:

[12] **Пугаченкова Г.**, *Материалы по восточной глиптике (Труды Среднеазиатского государственного университета, вып. CXI. Археология Средней Азии, Ташкент, 1957, с. 148);* **Борисов А., Луконин В.,** *Сасанидские геммы, Л., 1963, с. 42.*

[13] **Herzfeld E.,** *Kushano Sasanian Coins (Memoires of the Archaeological Survey of India, Calcutta, 1930, p. 17).*

[14] **Борисов А.**, Об одной группе сасанидских резных камней (Труды отдела Востока Эрмитажа, т. 1, 1939, с. 239).

[15] **Губаев А.,** *Поселения сасанидского времени в южном Туркменистане, автореф. канд. дисс., Л., 1967, с. 8;* **Huff D.,** նշվ. աշխ.:

[16] **Асланов Г.,** *К изучению раннесредневековых памятников Мингечаура (Краткие сообщения, 1955, 60, с. 70).*

կը նշանով մի կնիք է, որի արձանագրությունը, ցավոք, չի ընթերցվում և կրում է վաղմիջնադարյան ընդհանուր թվագրություն (V-VII դդ.):

Գուշնասպ տաճարից հայտնի են ոչ միայն մոգերի, այլև դպիրների[17] և գանձապետների[18] անուններով արձանագրված կնիքներ և կնքադրոշմներ, որոնք վկայում են սասանյան հսկայածավալ տաճարային հաստատության բազմաճյուղ համակարգի գործունեության ոլորտները:

Դվինի կնքադրոշմի վրա արձանագրված մանրամասները համապատասխանում են Գանձակի (Թախտ-ի Սուլեյմանի) տաճարին վերագրվող ատրիբուտներին, այն է՝ ռազմիկներին նվիրված մի սրբատեղի, որ միաժամանակ ծառայում էր արքաներին: Շահնամեի տարաբնույթ հատվածներում արձանագրված են սասանյան արքաների (Խոսրով Նուշիրվանի և Խոսրով Փարվեզի) կյանքի դրվագները՝ տաճարին մատուցված զոհաբերությունները, ուխտագնացությունները, օտար երկրներից եկվոր թագուհիների հավատափոխությունը և այլ արարողությունները, որոնք իրականանում էին Ատուր-Գուշնասպ տաճարում:

Սասանյան վաղ շրջանի արձանագրությունները Գանձակի կրակի տաճարը չեն հիշատակում: Մ. Բոյսը սրբարանը թվագրում է IV-V դարերով[19]: IV դ. տաճարի գոյությունը հաստատում է նաև ասորական մի սկզբնաղբյուր: Ասորի նահատակ Յազբանդուխտի վկայաբանության էջերում հիշատակվում է, որ գործողությունն իրականացրել է Ատուր-Գուշնասպ անունով մի մոգ[20]:

Փաստորեն, IV դարում սրբատեղին մոգերի գործող համակարգով ձևավորված հաստատություն էր, սակայն գործունեության ակտիվ ժամանակաշրջանը VI-VII դդ. (ուշ սասանյան շրջան) էր:

Գուշնասպը՝ իբրև VI դարի գործող սրբատեղի, արձանագրված է նաև Սեբեոսի «Բագինս Հրատին մեծի որում Վշնասպն կոչէին» և Թովմա Արծրունու պատմության էջերում. «*Եվ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ ել դեպ ի Կարնոյ քաղաք և անցանէր Շիրակ և հասեալ ի Դուին աւերէ զնա և զՆախճաւան և զօրմի և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի Բրէ զնա աւերէ զԱհմատան և զՄայ, կործանէ և զԲագինս Հրատին մեծ որում Վշնասպն կոչեն*»[21]:

Մյուս կնքադրոշմը (ՀՊԹ 1981/79) 1.2x1.2 չափերի է և դրոշմազարդված կիսալուսինների բաղադրիչների մեկ այլ տարբերակով (նկ. 2)՝ շուրջը պահլավերեն հետևյալ արձանագրությամբ [A]twr[…….]ZY, mgw (հուր, կրակի տաճարի մոգ): Կնքադրոշմի զուգահեռ կնիք հայտնի է Լուվրի նգարանից և հրատարակված է իբրև Գուշնասպի մոգերից մեկի կնիքը[22]:

---

[17] **Göbl R.,** *Tombullen von Tacht-i Suleiman, Berlin, 1976, 52, N 6a,* **Gignoux Ph.,** *Noms Propres sasanides en moyen perse epigraphique, Wein, 1986, N 430, p. 95.*

[18] **Борисов А.**, նշվ. աշխ., էջ 236:

[19] **Бойс М.**, *Зороастрийцы, М., 1987, с. 50.*

[20] **Տեր-Պետրոսյան Լ.**, Աբրահամ Խոսրովանուշի Վկայք Արևելից, Ե., 1976, էջ 130-131:

[21] **Սեբեոսի եպիսկոպոսի** պատմութիւն, Ե., 1939, էջ 27, 29, 80, **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 138:

[22] **Gignoux Ph.,** *Catalogue des sceaux camees et bulles Sassanides de la bibliotheque National et du Musée Louvres, Paris, 1978, p. 22, tabl. 2-21.*

Նկար 1

Նկար 2

Ո ւստի համադրելով մեր տրամադրության տակ եղած նյութը՝ կարող ենք ենթադրել, որ կնիքն ու կնքադրոշմը պատկանել են Ատուրգուշնասպ կրակի տաճարի բավական լայն իրավունքներով օժտված մոգի, որը, հավանաբար, իր կնիքով հաստատել է արքայի արձակած և Հայաստան ուղարկվող հրամանագրերն ու հրովարտակները:

Դվինի կնքադրոշմներն արժեքավորվում են նաև իբրև տեղագրության ու պաշտոնյայի անունն արձանագրող վավերագրեր: Այդ իմաստով, երբ անդրադառնում ենք Ա. Կոլեսնիկովի ընդունած կնիքների ու կնքադրոշմների տեսակավորման ցուցատախտակին, նյութն ամփոփվում է նրա մշակած համակարգի երկրորդ խմբում, որտեղ հիշատակվում է ոչ միայն տեղագրության (Գանձակի Ատուրգուշնասպ), այլև մոգի անունը՝ Որմիզդ, Ատուր[23]: Իսկ մոգերը սասանյան իրավակարգի սանդղակում արքայից հետո երկրորդ տեղն էին զբաղեցնում[24], և դատաստանագրքում նրանց կնիքները հիշատակվում են իբրև պաշտոնական:

Ինչպես տեսանք, առայժմ շերտագրական որոշակի միջավայրից հայտնի կնքադրոշմները VI-VII դդ. Դվինից[25], Ակ-Դեբեից, Մինգեչաուրից և Թախտ-ի Սուլեյմանից են:

Աշխարհում շրջանառու մնացած հրատարակությունների նյութը անորոշ ծագումով է, և հեղինակները, գտածոների բուն ակունքի վերաբերյալ տվյալների չտիրապետելով, տեսակավորումը և թվագրումն իրականացրել են տեսական դրույթների և արձանագրությունների տվյալների հիման վրա:

Եթե կնքադրոշմների գործառույթի սահմանագիծն ընդունենք VI դարը, ապա քաղաքական իրադարձությունները պետք է կապել Խոսրով Ա

[23] **Колесников А.,** *Проблемы атрибуции административных топономик на официальных печатях (Восточное историческое источниковедение и специальные исторические дисциплины, вып. I, М., 1989, с. 247).*

[24] **Периханян А.,** *Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, М., 1983, с. 18.*

[25] Դվինի ուսումնասիրվող կնքադրոշմները մշակութային նույն, բայց տարբեր քառակուսիներից են (1955 թ. գտնված) և հայտնաբերվել են արագիլի պատկերով սասանյան մի կնիքի հետ:

Նուշիրվանի (531-579 թթ.) հայտնի բարենորոգումների փաթեթի հետ, որով կաղաստրա-յին խնդիրներում կանոնավորվել էր հարկերի և տուրքերի համակարգը[26], գանձարանը հարստացել էր՝ ապահովելով ռազմական բարենորոգումների համար անհրաժեշտ միջոցները: Վերջինս Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմներում առաջնահերթ կարևորություն ներկայացնող բարենորոգումներից էր: Դվինը, լինելով սասանյան տիրապետության մի հատված, այդ փոփոխություններին պիտի բերեր իր մասնակցությունը՝ կենտրոնից ուղղորդվող հրովարտակներով ու հրամանագրերով:

Կնքադրոշմների՝ VII դարով թվագրությունն ընդունելիս Դվինի քաղաքական կյանքը կապվում է Խոսրով Բ Փարվեզի (590-628 թթ.) ժամանակների քաղաքական ու դավանաբանական խնդիրներում առկա շոշափելի փոփոխությունների հետ:

Նկատի առնելով 572 թ. ապստամբության դասերը, պարսկա-բյուզանդական հակամարտության պատճառով երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամը՝ Խոսրով Բ Փարվեզը ծրագրեց մի նոր քաղաքականություն՝ խանգարել Բյուզանդիայի հզորացմանը և սահմանների ընդարձակմանը՝ ի հաշիվ Պարսկաստանի: Այդ նպատակի իրականացման համար հարկ էր շեղել հայ նախարարներին բյուզանդական կողմնորոշումից[27] և մշակել կրոնադավանական նոր սկզբունքներ: Զգալով կայսրությանը սպառնացող ահեղ վտանգը՝ Խոսրով Բ-ն առաջին հերթին հեղաշրջեց նախորդ արքաների մոլեռանդ դավանափոխության քաղաքականությունը: Տիզբոնի եկեղեցական 618 թ. ժողովում նա Պարսկաստանի սահմաններում ապրող հպատակ բոլոր քրիստոնյաներին հարկադրեց ընդունելու միաբնակության կանոնները: Ինչպես Մ. Օրմանյանն է նշում, շարժառիթը քաղաքական էր, որովհետև «*Խոսրովի աչքին մեծ նշանակություն ունեցած պիտի չըլլար Քրիստոսի բնությանց միավորության կամ երկվության խնդիրը*»[28]: Այնուհանդերձ, թեկուզ և քաղաքական նպատակներից բխող այս քայլը Հայաստանում ձեռք բերեց որոշակի քաղաքացիություն, նորոգեց դավանանքի մթնոլորտը՝ արմատավորելով միաբնակ եկեղեցու սկզբունքները:

Մյուս կողմից, ինչպես Ռ. Ֆրայն է գրում, զրադաշտականությունը սպառել էր իրեն, և աղանդավորական տարբեր շարժումների աշխուժացումը (մանիքեություն, նեստորականություն) սպառնում էր ներքուստ խարխլել երկրի հիմքերը[29]: Քրիստոնեության սկզբունքներն այդ ժամանակահատվածում դարձել էին այնքան ընդունելի, որ փորձ էր արվում զրադաշտականության և քրիստոնեության միջև հնարավոր ընդհանուր եզրեր գտնելու: Երկու վարդապետությունների ընդհանուր ակունքները շեշտելու փորձերն արտացոլվում էին ավանդություններում: Օրինակ, պահպանվել է Աբուլ Դուլաֆի գրառած մի ավանդություն, որտեղ զրադաշտական կրոնին են փոխանցվում քրիստոնեական հավատքի որոշ

[26] **Луконин В.,** *Сасанидское серебро, М., 1987, с. 19.*
[27] **Իսկանյան Հ.,** Հայ բյուզանդական դաշինքը Պարսկաստանի դեմ (ՊԲՀ, 1963, N 4, էջ 51):
[28] **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Պոլիս, 1913, էջ 489:
[29] **Фрай Р.,** *Наследие Ирана, М., 1972, с. 325.*

դրվագներ: Ավանդության համաձայն՝ Պարսկաստանի արքա Խուրմազին (ըստ երևույթին Որմիզդն է 272-273 թթ.) լուր է հասնում Բեթղեհեմում սրբազան երեխայի ծննդյան մասին, ու ինքը մոգի միջոցով իբրև նվեր յուղ և խունկ է ուղարկում, որպեսզի իր երկիրն օրհնվի նորածնի կողմից: Մարիամն այդ մոգին հանձնում է հող և հայտնում, որ այդ հողը ցանելու դեպքում տեղում պիտի քաղաք հիմնվի: Եվ Որմիզդն այնտեղ, որտեղ լույս էր ճառագել, կառուցում է կրակի տաճար՝ Ատրգուշնասպը[30]: Նույն ավանդությունը քիչ այլ մեկնաբանությամբ արձանագրված է սիրիական «Գանձերի քարանձավ» հուշագրությունում VI-VII դդ., ըստ որի՝ մոգերից մեկը Որմիզդ անունն էր կրում և ապրում իր Ատրպատականում[31]:

Խոսրով Բ-ն, Դվինում հայ մարզպան Սմբատ Բագրատունուն նշանակելով, փոխեց նաև իր տիրապետության ծայրամասերի կառավարման համակարգը: Այդ փոփոխությունը նորամուծություն չէր, որովհետև այդ քայլի իմաստությունը V դարում հասկացել էր Վաղարշը (484-488 թթ.):

Հատկանշական է պարսիկ մարզպան Անդիկանի հետևյալ հաղորդումը. «*Եւ դարձեալ օտար մարզպանն երթայ յաշխարհն Հայոց յաշխարհն մեծ է յամս երկուս և երիս հազիւ կարէ ճանաչել նախ զիրս աշխարհն զլաւսն և զվաթարսն, զապիրատսն և զպիտանիսն, և վարելով ըստ անգիտութեան խառն ի խուռն... մարզպանն պարսիկ որ երթայ յաշխարհն կնաւ երթայ և որդւովք, դրամբ և սիրելովք, ծառայիւք և աղախնեօք և այնք ամենեքեան թե զԱրեաց տեառն զռոճիկ ուտեն չէ սակաւ ծախսն, և թէ աշխարհքն ուտեն՝ շատ վտանգ հասանէ աշխարհին մարդկան: Իսկ նա թե լինի զիւր տանն համբար ուտէ և այն ամենայն յարքունի գանձ համարի. . .*»[32]:

Սմբատ Բագրատունու մարզպանության ժամանակաշրջանը նպաստավոր էր և հայ նախարարների պարսկամետ կողմնորոշումն ապահովելու համար: Ճիշտ կռահելով պահի կարևորությունը՝ նա պայքարի թիրախ դարձրեց ոչ միայն տեղի քաղկեդոնականությանը հարող նախարարներին և հոգևորականությանը, այլև սասանյան կայսրության հա-մար վտանգ ներկայացնող Վրաստանի դավանափոխության դիրք ընդունած Կյուրոնին: Այդ մասին «Գիրք թղթոցում» կան Սմբատ Բագրատունու նամակները՝ ուղղված Կյուրոնին՝ հետ կանգնելու քաղկեդոնական կողմնորոշումից[33]:

Դվինում ստեղծված հարաբերական խաղաղ պայմաններում իրականանում էին շինարարական որոշակի աշխատանքներ: «Շինեն նախարարք Հայոց իւրաքանչիւր պալատս արքունական և դաստակերտս յականաւորս և զքաղաքն որմնափակօք պարսպեն և խաղաղեցուցանեն զերկիրս»[34]: Դվինում պետական մտածելակերպով հասարակական շինությունների և

---

[30] **Minorsky V.,** *Two Iranian Legends in Abu Dulaf's II Risalah (Archaeologia Orientale in Memorian Ernst Herzfeld, N. Y., 1952, p. 172-175).*

[31] **Луконин В.**, *նշվ. աշխ., էջ 102:*

[32] **Ղազար Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, դրվագ Գ, ՂԸ, Ե., 1982, էջ 430:

[33] Գիրք թղթոց, էջ 168-169:

[34] **Թովմայի Վարդապետի Արծրունւոյ** Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 138:

նրանց կառուցապատման նախագծերը, անկասկած, իրականություն էին դառնում բուն կայսրությունից բխող հրամանագրերով կամ հրովարտակներով: Նման հիմնավոր շինություններից մեկը շուրջ 30 տարի պեղվում է Դվինի միջնաբերդի հարավային բուրգի շրջանում (նկ. 3, 4): V դ. կառուցված և բազմաշերտությամբ հայտնի



Նկար 3

Նկար 4

հսկայածավալ այս կառույցի մշակութային կերտվածքներից մեկը VI-VII դդ. վերակառուցված շինության հատվածներից է հատկանշական նյութերով՝ եռանիստ նետասլաք սասանյան մաշված դրամ և ամենակարևորը՝ դրոշմազարդ անոթի մասն ու բրոնզե կափարիչը (նկ. 5, 6), որոնց հարդարանքը՝ բուսական ոճավորված

Նկար 5

Նկար 6

միջավայրի երիզափակ շրջանակի մեջ դեմ դիմաց գլուխները հակադիր ուղղությամբ պատկերված թռչունները, սասանյան արվեստում տարածված թեմաներից է և բազում զուգահեռներ ունի համաժամանակյա այլ հուշարձաններում[35]:

[35] **Бадер О.,** *Уникальный сосуд из Кунгура (Вестник древней истории, 1948, N 3, с. 166),* **Иерусалимская А.,** *К сложению школы художественного шелкоткачества в Согде (Средняя Азия и Иран, Л., 1972, с. 25, рис. 13₃).*

Ուսումնասիրված կնքադրոշմները պետք է վերագրել VI-VII դդ. քաղաքական հեղաշրջման ժամանակաշրջանին, երբ Դվինում իրականացվող պետական մասշտաբի տնտեսական ու շինարարական բարեփոխումները, անշուշտ, իրականացվում էին բուն կենտրոնից ուղղորդվող հրահանգներով: Իսկ թե ինչու այդ հրահանգները տեղ էին հասնում Գանձակից, բացատրությունը մեկն է. Գանձակը Ատրպատական սասանյան տիրապետությունը Հայաստանին կապող ամենակարճ բանուկ ճանապարհն էր, որը հիշատակվում է Անանիա Շիրակացու թվաբանական խնդիրներից մեկում[36]:

Այսպիսով, Դվինի պաշտոնական այս երկու կնքադրոշմները ժամանակի կարևոր վավերագրերի թվին են պատկանում և պատմական խնդիրների մեկնաբանման առաջնահերթ սկզբնաղբյուրներից են:

О ДВУХ САСАНИДСКИХ БУЛЛАХ ИЗ ДВИНА

ЖАМКОЧЯН А. С.

Резюме

В ходе археологических работ в цитадели Двина были найдены остатки ранехристианской церкви, к которой прилегало полуразрушенное строение. Согласно стратиграфическим данным, оно относится к позднесасанидскому (V-VII вв.) периоду. В нем обнаружена большая коллекция булл, из которых 12 являются официальными. Среди них примечательны две буллы, на которых имеются надписи на среднеперсидском языке, а также печати, подтверждающие их принадлежность зороастрийским магам из храма Гушнасп (Атропатена).

Двин являлся центром Сасанидского марзпанства, и рассматриваемые буллы свидетельствуют о наличии указов, рассылаемых в марзпанстве в V-VII вв. Сасанидские буллы являются важным источником для изучения истории Двина.

[36] Կանոնագիրք Հայոց, հ. Բ (Վ.Հակոբյանի աշխատասիրությամբ), Ե., 1971, էջ 264-265: